ՆԱԽԱԳԻԾ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N 009-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03-Ը ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 03-ը մարտի 2025 թվականի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 03-ը մարտի 2025 թվականի թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

4. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու և ծնողական վճարներից զեղչելու մասին:

5. ՀՀ Վայոց ձոր մարզի <<Եղեգնաձորի պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի տնօրենի գրությունը քննարկելու և Արենի համայնքի Ելփին, Չիվա, Ռինդ բնակավայրերի ԲՄԿ-ների էլեկտրաէներգիայի անհատույց մատակարարմանը համաձայնություն տալու մասին:

6. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մշակույթի տնից առանձնացված հատվածը սգո սրահի կառուցման նպատակով հատկացնելու և սրահին առանձին մուտք ապահովելու համար նախամուտք և սանհանգույց կառուցելու նպատակով գումար հատկացնելու մասին:

7. Արենի համայնքի բնակավայրերում իրականացված լրացուցիչ շինարարական աշխատանքների համար գումար հատկացնելու մասին:

8. Արենի համայնքի ավագանու 30.11.2022թվականի թիվ 136-Լ որոշման 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի ավագանու նոր կանոնակարգը ընդունելու մասին:

9. Արենի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանը հաստատելու մասին:

10. Արենի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:

11. Արենի համայնքի 2024թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

12. Արենի համայնքի ղեկավարի 2024թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

13. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյանը